մերձաւորք իւր, որք ուղղեցին յԱմստերդամ տպագրարան անուանի։ Երկոքին ևս գեօղքդ բնակեալ են 'ի մահմետականաց։ — Ի հիւսիսակողմն արևելից գաւառիս կայ ՉԻՆԱՆԱՔ վիճակ փոքր հինգ գիւղովք. որոց գլխաւոր Չինար 40 տուն հայովք, և երիւք հին եկեղեցեօք. իսկ յարևմտից ՊԵՂԵՒ 19 գիւղօրայիւք, յորս են և հին Թեմքն Թովմայի վանաց, այսինքն Ծըղնա՝ յելից Հուռոմայ բարձրագմբէթ եկեղեցեաւ, Բոստա՝ յորում աւերակք եկեղեցեաց, Փառաչա յորում մենաստան Ս. Յակոբ հայրապետի. Այս երկու գեւղք 100 հայ գերդաստանօք, Մարխան՝ յորում էր մենաստան շինեալ 'ի Ս. Մեսրովպայ, Պէնէս, Խոսրով, և այլն։

Գ. ԳԱՆՁԱԿ ՆԱՀԱՆԳ

158. Նահանգս այս որ յանուն հնոյ քաղաքին Աղուանից-Հայոց՝ կոչի ԳԱՆՁԱԿ և նորով անուամբն ԵՂԻՍԱԲԵԹՈՒՊՕԼԻՍ կոչի, կայ յելից Սևանայ կամ Կէօք-չայի, և 'ի մտից Կուր գետոյ, 'ի հիւսիսոյ՝ Զօրագետով կամ Փռուշալուաւ (121. 123) բաժանի 'ի Սօմխէթայ, և 'ի հարաւոյ 'ի Գարապաղ նահանգէ՝ Կուրակ կամ Գուրակ գետով, և լերամբք՝ յարևելից հարաւոյ Սևանայ։ Հիւսիսային կողմն՝ սպառուած է Գուգարաց աշխարհի, արևմտեանն երկիր լեռնային է մասն ԱՐՑԱԽ աշխարհի, արևելեանն դաշտային երկիր առ Կուր գետով՝ մասն ՈՒՏԻ աշխարհի։ Յարևմտից 'ի լերանցն իջանեն գետք հզօրք և մանունք և ընթացեալ յարևելս՝ խառնին 'ի Կուր, ոռոգելով զերկիրն 'ի ձորահովիտս յոլովս, որոց 'ի վաղեմի դարս իշխէին ազատասուն պայազատք Սիւնեաց ազգի հայկազնոյ, և յետ բարձման Արշակունեաց հարստութեան՝ միջամուխ եղեն և Աղուանք վտարեալք յայնմ կողմանէն Կուրայ. սերունդք նոցա և Թաթարք և Պարսք տիրէին երկրին ցմերս դար, յորոյ սկիզբն Ռուսք հանին 'ի Պարսից զնահանգս, նուաճեալ զԳանձակ քաղաք՝ յորում նստէր խան մեծիշխան, և կարգեցին զայն աթոռ կուսակալի. 'ի չորս գաւառս տրոհեալ զնահանգն, որ են Խազախ, Շամշադիլ, Այրում և Եղիսաբեթուպօլ. յորս բնակեն Հայք աւելի քան զ20,000 և Թաթարք հանդերձ այլովք իբրև 60,000։

159. Ա. ԽԱԶԱԽ գաւառ 'ի հիւսիսի նահանգին կայ, յարևմտից սահմանակից գոլով Փռուշալուայ (122) և Կէօքչայայ (143) և Աղստև գետով բաժանեալ 'ի Շամշատիլայ. 'ի միջին դարս Հայոց չէն էր յոյժ երկիրս շինութեամբ ամրոցաց յիշխանաց պայազատաց Բագրատունեաց և բարեկանոն վանորայից. և կոչէր ըստ զանազան կողմանցն ԿԱՑԷՆ, ՄԻԱՓՈՐ և ԱՂՍՏԵՒ, մերթ գաւառաց անուամբ և մերթ աշխարհաց, և մնան ցարդ անթիւ նշխարք շինուածոցն, է որ կանգուն և է որ աւեր. այսպիսի է Բէրդ Կալէնոյ յարևմտակողմն, ուր Աշոտ Երկաթ ամրանայր երբեմն, զոր զօրք Չարմաղանայ ԺԳ դարու աւերեցին. և յարևմտից հարաւոյ առ ստորոտովք Իշխէկ-մէյտան լերանց և մերձ յԱղստև գետ Գէտիկ Վանք կամ Գոշայ Վանք, զոր 'ի վերջ կոյս ԺԲ դարու կանգնեաց Մխիթար իմաստուն վարդապետ, յետ աւերման հնոյն Գետկայ որ յելից հարաւոյ նորա բացագոյն յայլում վիճակի. կանգուն կան եկեղեցիք նորա և մասն մենաստանին և գերեզման կանգնողին։ Յելից սոցա ձգի Կէօք լեառն երկայնանիստ, որ է Գոք լեառն 'ի համանուն դաշտի, յորոյ գագաթան մատուռն շինեալ սրբոյն Մեսրովպայ՝ եդ 'ի նմա մասն 'ի նշխարաց Ս. Սարգսի. առ ստորոտովն կայ բերդն Գագայ անուանի 'ի Ժ-ԺԳ դարս։ Ի սմին դաշտի ամբառնայ և Գաւարզին լեառն 1500' 'ի վեր, բըրգաձև ապառաժ պորփիւր գորշագոյն, պատուեալ անձաւաձև գագաթամբ։ Ի ստորև սորա կայր բերդ համանուն, թերևս կոչեցեալն Քարհէշ՝ որում իշխէր Վահրամ իշխան յաւուրս արշաւանաց Թաթա-

Գաւարզին լեառն. — Pic de Cavarzin.